COVID - 19

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՄՆՈՒՄ Է «ԿԱՆԱՉ ԵՐԿԻՐ» ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱՅՍ ՓՈՒԼԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Այսօր Վրաստանը մնում է «կանաչ երկիր» եւ, մնացածների համեմատ, արդյունավետ է կառավարում համավարակի փուլը ադապտացիայի եւ կառավարման շրջանում, չնայած որ, դա չէ մեզ համար գլխավոր չափորոշիչը: Մենք հնարավոր է, վաղը զրկվենք «կանաչ երկրի» կարգավիճակից, իսկ մյուս օրը՝ կրկին ձեռք բերենք:

Մեզ համար ամենակարեւորն ու առաջնահերթը քաղաքացիների առողջությունն է, երկրորդը, որ անհրաժեշտ չլինի գործարկել սահմանափակումներ, որոնք նույնպես լուրջ ռիսկեր եւ անհարմարավետություն կստեղծեն էկոնոմիկայի արագ վերականգնման ճանապարհին, եւ, իհարկե, երրորդը՝ արդյունավետ ավարտենք ընտրությունների գործընթացը, Վրաստանում անցկացնենք թափանցիկ եւ ժողովրդավար ընտրություններ՝ համավարակի պայմաններում,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Անդրադառնալով համավարակին դիմակայելու երկրում բժշկական ենթակառույցների պատրաստվածության թեմային՝ վարչապետը նշեց, որ այսօր երկրում բժշկական համակարգի ենթակառուցվածքը լիովին պատրաստ է, որպեսզի կառավարի կորոնավիրուսի վարակակիր ծանր եւ ծայրահեղ ծանր բուժառուներին:

Նրա խոսքով, երկրի ողջ տարածքով գործընթացը լիովին կառավարելի է:

- Կարեւոր է, որ այսօր երկրում բժշկական համակարգի ծայրահեղ եւ ծանր բուժառուների կառավարման ենթակառուցվածքն ամբողջովին պատրաստ է, որպեսզի ճիշտ ձեւով կառավարի ծանր, ծայրահեղ ծանր բուժառուներին: Դրա համար ստեղծվել է կլինիկական խումբ, ռեանիմատոլոգների առանձին խումբ, որը երկրի ողջ տարածքով լիովին վերահսկում է այդ գործընթացը,- նշել է Գախարիան:

Լրագրողների հետ հանդիպմանը Գիորգի Գախարիան կրկին քաղաքացիներին կոչ արեց օգտվել «Stop Covid» հավելվածից, որը նախազգուշացնելով՝ կանխում է վարակված անձի հետ հնարավոր շփումը:

- Մեզ համար ամենակարեւորն է արագ բացահայտել վարակվածներին եւ հաստատել նրանց շփումները, որոնց վրա աշխատում են համապատասխան կառույցները, եւ արագ մեկուսացնել այդ մարդկանց: Այդ իսկ պատճառով, «Stop Covid»-ը արդյունավետ հավելված է, որը մշակվել է առողջապահության նախարարության կողմից: Ես նույնպես ներբեռնել եմ այս ծրագիրը հեռախոսիս մեջ, եւ պետք է հորդորենք բոլոր այն մարդկանց, ովքեր հայտնվում են հիվանդանոցում, որպեսզի ներբեռնեն այս ծրագիրը,- հայտարարել է Գիորգի Գախարիան:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 36,779 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 067 268 հազարը: Ապաքինվել է 27 միլիոն 682 631 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է **ԱՄՆ-ը,** որտեղ հաստատված **7 833 763** դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **217 738** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **6 906 151-ի**, մահացածներինը՝ **106 521-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ վարակվել է **5 029 539**, մահացել՝ **149 034** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **1 272 238**, վարակի հետեւանքով մահացել՝ **22 257** մարդ:

Կոլումբիայում վարակվել է **886 179**, վարակի հետեւանքով մահացել՝ **27 331** մարդ: **Իսպանիայում** վարակվել է **884 381**, վարակի հետեւանքով մահացել՝ **32 688** մարդ: Իսպանիային հաջորդում են Արգենտինան, Պերուն, Մեքսիկան եւ Հարավային Աֆրիկան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **55 087**-ի, մահացածներինը՝ **1010**-ի, ապաքինվածներինը՝ **45 528**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **41 304** մարդ: Վարակից մահացել է **603**, ապաքինվել՝ **39 012** մարդ:

Հոկտեմբերի 10-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **10 752,** մահացել՝ **72**, ապաքինվել՝ **5 866** մարդ:

STOP COVID-19. ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

1.Երեխաներին դպրոց մի ուղարկեք, եթե նկատել եք ջերմության ավելացում (37^{0} եւ ավելի)՝ հազ, հարբուխ կամ վարակային այլ ախտանշաններ:

2.Նման դեպքերում դպրոցի ղեկավարությանը կամ դասղեկին տեղեկացրե'ք բացակայության պատճառը:

3.Անմիջապես կանչեք ընտանեկան բժշկին կամ զանգահարե'ք 112 հեռախոսահամարով:

Երեխաները դպրոցում. 1.Պետք է պահպանեն առնվազն մեկ մետր հեռավորություն: 2.Հաճախ լվանան ձեռքերը օճառով եւ ձեռքերը շփեն սպիրտի հատուկ լուծույթով:

Ձեր աջակցությունը նշանակալից է «COVID-19»-ի դեմ պայքարում կառավարության ադապտացիայի եւ կառավարման ծրագրի իրականացման գործում:

www.stopCoV.ge

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 8-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պահպանության նախարար Էկատերինե Տիկարաձեն, հանդիպում ունեցան կլինիկաների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը կառավարության ղեկավարը խոսեց վերակենդանացման առանձին խմբի ստեղծման մասին, որը ղեկավարելու է երկրի տարածքում ծանր եւ ծայրահեղ ծանր հիվանդների կառավարումը, եւ այդ գործընթացն իրականացվելու է Թենգիզ Ցերցվաձեի գլխավորած կլինիկական խմբի հետ լիարժեք համաձայնեցմամբ:

Հանդիպումը կառավարության գրասենյակում անցել է հարցուպատասխանի ձեւաչափով: Վարչապետը տեղեկացել է կլինիկաների ներկայացուցիչների եւ բժիշկների կարծիքների ու հանձնարարականների մասին՝ կապված կլինիկական, այդ թվում՝ ծանր բուժառուների կառավարման գործընթացի հետ: Նման ձեւաչափի հանդիպումները կլինիկաների ներկայացուցիչների հետ կշարունակվեն ապագայում եւս:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐԴ Է, ՍԱԿԱՅՆ՝ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ»

Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջանպահության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն, մեկնաբանելով վերջին ժամանակներում երկրում եւ առանձնապես Թբիլիսիում վարակման դեպքերի կտրուկ աճը, հայտարարեց, որ Թբիլիսիում կորոնավիրուսի դեպքերի թիվն ավելացել է կանոնակարգերը չպահպանելու պատճառով:

Նա քաղաքացիներին կրկին հորդորեց պահպանել կանոնակարգերը:

- Դա պայմանավորված է կանոնակարգերին չենթարկվելու եւ անզգուշության հետեւանքով: Մենք ամեն օր ասում ենք, որ պարտադիր է պահպանել կանոնակարգերը, պետք է զգուշորեն վերաբերվենք Թբիլիսիին՝ հաշվի առնելով մարդկանց բազմաքանակությունը, այժմ ամենավտանգավորը Թբիլիսին է, եւ պետք է կարողանանք լիարժեք ենթարկվել կանոնակարգերին,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնի ղեկավարը նշեց, որ 2-3 շաբաթում Վրաստանը մեծ հավանակությամբ կստանա այսօրվա ամենահուսադրող եւ պահանջարկ ունեցող «ռեմդեսիվիր» հակավարակային դեղամիջոցը, դա ավելի կնվազեցնի մահացության թիվը:

- Շատ ինտենսիվ բանակցություններ է վարում երկրի ղեկավարությունը, եւ շուտով՝ մոտ 2-3 շաբաթից, Վրաստանը կլինի Արեւելյան Եվրոպայի հավանաբար առաջին երկիրը, որը կստանա այսօրվա ամենահուսադրող եւ պահանջարկ ունեցող «ռեմդեսիվիր» հակավարակային դեղամիջոցը: Ապացուցված չէ, որ այս դեղամիջոցն իրոք բուժում է կորոնավիրուսը, սակայն այլ դեղամիջոցների համեմատ իրոք հուսադրող է: Այս դեղամիջոցը շատ հուսադրող է: Ամերիկայում դեռեւս չեն հասցրել արտադրել այն բավարար քանակությամբ, մինչդեռ մեր կառավարությունն արդեն գնել է եւ 2-3 շաբաթում Վրաստանը, մեծ հավանակությամբ կստանա այն՝ նվազեցնելով մահացության թիվը,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Կենսաթոշակային գործակալությունը հաստատել է ներդրումային քաղաքականության փաստաթուղթը:

Ներդրումային քաղաքականությունը սահմանում է կենսաթոշակային ակտիվների ներդրումների երկարատեւ ռազմավարություն: Փաստաթուղթը մշակվել է կենսաթոշակային գործակալության ներդրումային խորհրդի կողմից, իսկ փաստաթղթի համապատասխանությունը՝ «Կուտակային կենսաթոշակի մասին» օրենքին, հաստատվել է Վրաստանի ազգային բանկի կողմից:

Կենսաթոշակային գործակալության համաձայն, ներդրումային քաղաքականության փաստաթուղթն իրենից ներկայացնում է ներդրումային գործունեության հիմնական փաստաթուղթը, եւ սահմանում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ներդրումների նպատակները, ռիսկերի կառավարումն ու ներդրումային գործընթացները:

- Ներդրումային քաղաքականության փաստաթղթի համաձայն, ներդրման նպատակը ներդրումներից դրական եկամուտ ստանալն է (հաշվի առնելով արժեզրկումը) 95 տոկոս ու ավելի հավանականությամբ, եւ պահպանել անհրաժեշտ իրացվելիությունն ու ներդրումների պորտֆելի դիվերսիֆիկացումը: Այդ նպատակների համար սահմանվել են Բենչմարկ (նպատակային) պորտֆելը եւ ռիսկի սահմանները: Ներդրումային քաղաքականության փաստաթղթով ամրապնդվեց ռիսկերի կառավարման մոտեցումը: Ռիսկերի կառավարման գործում կենսաթոշակային գործակալությունն օգտագործում է պաշտպանության երեք ուղղության սկզբունքը, որը համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափանիշ է: Առաջին գիծը հենց ներդրումային ծառայությունն է, որը պատասխանատու է ներդրումային գործընթացում ծագող ներդրումների եւ գործնական ռիսկերի ու դրանց կառավարման համար: Երկրորդ ուղղությունը ռիսկի սպան է, որն ինքնուրույն, անընդհատ ստուգում է ներդրումային պորտֆելի եւ գործարքների համապատասխանությունը: Աուդիտի ծառայությունը՝ որպես պաշտպանության երրորդ գիծ, տալիս է միանգամայն անկախ հավաստիացում առ այն, որ ներդրումային ծառայությունն ու գլխավոր ռիսկերի գծով սպան ճիշտ են գործում:

Ներդրումային քաղաքականության փաստաթղթի հաստատումը կենսաթոշակային գործակալության ներդրումային գործունեության զարգացման կարեւորագույն փուլն է: Դա կարեւոր փաստաթուղթ է եւ սահմանում է ցածր ռիսկային պորտֆելի միջոցով ակտիվների տեղաբաշխման երկարաժամկետ ռազմավարություն՝ բարձր իրական եկամտաբերության հասնելու համար, - ասել է ներդրումների խորհրդի նախագահ Օլիվյե Ռուսոն:

ԿՐԹԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Չխենկելին մանկավարժներին շնորհավորել է Ուսուցիչների միջազգային օրվա առիթով, ուր մասնավորապես ասված է.

«Հոկտեմբերի 5-ը Ուսուցիչների միջազգային օրն է: Ցանկանում եմ սրտանց շնորհավորել ձեզ այս օրվա կապակցությամբ: Դուք այն մարդիկ եք, ովքեր առանձնահատուկ ներդրում ունեք ապագա սերունդների դաստիարակության գործում:

Ձեզանից յուրաքանչյուրը, անշահախնդիր քրտնաջան աշխատանքով եւ արհեստավարժությամբ, մեծ ներդրում ունի ավելի լավ հասարակության ձեւավորման գործում:

Ձեր քրտնաջան աշխատանքն ու նվիրվածությունը հատկապես դրսեւորվեցին համավարակի պայմաններում կրթական համակարգում առկա մարտահրավերների հաղթահարման գործում:

Վստահ եղեք՝ մենք անկեղծորեն գնահատում ենք ձեր աշխատասիրությունը, արհեստավարժությունն ու նվիրվածությունը գործին, որի շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել կրթության անխուսափելիությունն ու որակը:

Ես խորապես հավատում եմ, որ ուսուցչին գնահատելը կարեւոր է, ինչպես այս մասնագիտության հեղինակությունը բարձրացնելու, այնպես էլ՝ ավելի արժանի կադրեր ներգրավելու համար:

Շնորհավորում ենք ձեր մասնագիտական օրվա առիթով եւ շնորհակալություն հայտնում յուրաքանչյուրիդ անձնուրաց աշխատանքի համար:

Մաղթում եմ ձեզ հաջողություն եւ առողջություն»,- ասված է Միխեիլ Չխենկելու շնորհավորական տեքստում, որը հրապարակել է կրթության նախարարության մամուլի ծառայությունը:

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«...ՏԵՐԵՆՏԻ ԳՐԱՆԵԼԻՈՎ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՎՐԱՑԵՐԵՆՆ ՈՒ ՎՐԱՑՈՒՆ»

Վրաց ականավոր բանաստեղծ Տերենտի Գրանելին գրական ասպարեզ մտավ նախորդ դարի 20-ական թվականներին: Հենց առաջին բանաստեղծություններից հստակ երեւաց հասուն ստեղծագործողի ու պոետի սեփական ձեռագիրը: «Հոգեհանգիստներ» եւ «Սգո տողեր» անդրանիկ ժողովածուները մեծ համբավ ու լայն ճանաչում բերեցին երիտասարդ հեղինակին: Գրանելուն վրաց պոեզիայի Փիրոսմանի են անվանում: Նրա քնարերգությանը բնորոշ է թախիծն ու միստիկան: Թախծի, ասելիքի խորության, գեղագիտական բարձր ճաշակի վերարտադրությամբ Գրանելուն կարող ենք համեմատել Վահան Տերյանի հետ: Ու թերեւս պատահական չէ, որ հենց Տերյանի համերկրացի Վիկտոր Հովսեփյանն է հայերենով առաջին անգամ մեզ ներկայացրել Գրանելու սքանչելի պոեզիան:

Օրեր առաջ Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում անվանի գրողի, բանաստեղծի եւ արձակագրի՝ Վիկտոր Հովսեփյանի (1947-1996թթ.) հետմահու հերթական գրքի՝ «Երկխոսություն քնարերգության լեզվով» շնորհանդեսն էր: Երկլեզու գրքի առաջին մասում ներկայացված է բանաստեղծի անտիպ գործերից հայերեն մի փունջ եւ թարգմանաբար վրացերեն (թարգմանիչներ՝ Գիվի Շահնազար, Մաղվալա Գոնաշվիլի): Գրքի երկրորդ մասը զբաղեցնում են վրաց նշանավոր բանաստեղծ Տ.Գրանելու պոետական տողերը՝ վրացերեն ու հայերեն, Վիկտոր Հովսեփյանի թարգմանությամբ: Հովսեփյանը անձամբ չի ճանաչել Գրանելուն, սակայն նրա «Ճշմարիտ» պոեզիան անչափ հոգեհարազատ է եղել նրան: Վրաց գրչակցին համարել է իր պաշտամունքի աշտանակի կերոններից մեկը: Ահա թե ի՞նչ է խոստովանում Հովսեփյան-գրողը «Վրաստան» թերթին ուղղված իր նամակում (1996թ., օգոստոս): «Ես առաջվա պես ու առաջվանից էլ հասուն սիրում եմ այս պոետին՝ Տերենտի Գրանելուն, նրանով սիրում եմ վրացերենն ու վրացուն, ես այս անգամ էլ եմ կրկնում Գալակտիոնի խոսքը՝ «Կեցցե՜ Տերենտի Գրանելու պոեզիան...»:

Անդրադառնանք միջոցառման ընթացքին եւ նշենք, որ այն բացեց Կենտրոնի ղեկավար, գրողի դուստրը՝ Գիսանե Հովսեփյանը: Նա շնորհակալություն հայտնեց գրքի բոլոր աջակիցներին եւ վստահեցրեց, որ ընտանիքը շարունակում է համակարգել բանաստեղծի անտիպ գործերն ու դրանց տպագրությունը:

Ելույթ ունեցան Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչ Ալեքսանդր Գրիգալաշվիլին, բանաստեղծ Բաղաթեր Արաբուլին, Տերենտի Գրանելու թոռը Մամանտի Ռոգավան, գրող Բադրի Քուբաթելաձեն, բանաստեղծուհի Մանանա Գորգիաշվիլին, բանասիրական գիտությունների թեկնածու Էմմա Ախտյանը: Բանախոսները կարեւորեցին երկլեզու գրքի անհրաժեշտությունը մեր օրերում եւ այն գնահատեցին՝ իբրեւ երկու մշակույթների փոխկապակցման ու փոխհարստացման դրսեւորում:

Ձեռնարկին ուղիղ տեսակապով մասնակցեցին Հեշտիա գյուղի Վիկտոր Հովսեփյանի անվան թիվ 1 դպրոցի աշակերտները: Ներկաներին ողջույնի խոսքով դիմեց դպրոցի տնօրեն, վրաց լեզվի ուսուցչուհի, գրողի կրտսեր դուստրը՝ Նանե Հովսեփյանը, իսկ դպրոցականները հանդես եկան երկլեզու գեղեցիկ ասմունքով: Հարկ է նշել, որ միջոցառումն իրենց ներկայությամբ պատվել էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, գրողի այրին՝ տիկին Թերեզա Հովսեփյանը: Բանաստեղծական ընթերցումներով հանդես եկան Գիսանե Հովսեփյանը, Կենտրոնի աշխատակցուհի Գոհար Մազմանյանը, վաստակաշատ ուսուցչուհի Ռոզա Զոհրաբյանը:

Մերօրյա անվանի գրող-թարգմանիչ Գիվի Շահնազարը տեսակապով լսարանին ներկայացրեց իր թարգմանություններից:

Հավելենք, որ «Երկխոսություն քնարերգության լեզվով» գիրքի տպագրությունն իրականացվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարության՝ «Մշակույթի օժանդակություն» ծրագրի շրջանակներում: Այն գրողի բազմաբեղուն գրչի թվով 17-րդ, իսկ հետմահու 8-րդ հոգեզավակն է: Ընդգծենք, որ հետաքրքրության են արժանի Վիկտոր Հովսեփյանի գեղանկարչական կտավները եւս:

Ընթերցողին հիշեցնենք, որ Վիկտոր Հովսեփյանի ստեղծագործությունները թարգմանվել են վրացերեն, ռուսերեն, գերմաներեն, ուզբեկերեն: Ինչպես արդեն նշվեց, ինքը՝ բանաստեղծը, վրացերենից թարգմանել է Տերենտի Գրանելուն, գերմաներենից՝ Ռայներ Մարիա Ռիլկեին, ռուսերենից՝ Իննոկենտի Անենսկուն եւ այլոց:

1997 թվականին Վիկտոր Հովսեփյանի ծննդավայր Հեշտիա գյուղում հիմնադրվել է նրա տուն-թանգարանը եւ ամենամյա Հովսեփյանական պոեզիայի օրը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՆԻ Է TBC-Ի «ՍՏԱՐՏԱՓ ԴԵԿՐԵՏ» ՆԱԽԱԳԾԻ ՀԱՂԹՈՂ ԹԻՄԸ

TBC բանկի կողմից իր աշխատակիցների համար մեկնարկած «Ստարտափ դեկրետ» նախագծի երկրորդ ալիքի հաղթող թիմ դարձավ «Իդեա կուրսը»: Ժյուրիի որոշմամբ, եզրափակիչ դուրս եկած հինգ թիմերից լավագույն ստարտափ գաղափարի հեղինակներ դարձան TBC-ականներ Մարիամ Աբուլաձեն, Մարիշա Գոգոլաուրին եւ Մարիամ Ցանավան:

- «Իդեա կուրսի» ստարտափ գաղափարի իմաստն այնպիսի օնլայն հարթակի ստեղծումն է, որը կրթություն ստանալ եւ ինքնադրսեւորվել ցանկացող մարդկանց կապում է ուսուցիչների եւ դասընթացներ կազմակերպողների հետ:

«Ստարտափ դեկրետի» նախագծի հաղթող TBC-ականները հնարավորություն ունեն իրենց համար ցանկալի ժամանակահատվածում օգտվել վեցամսյա լրիվությամբ վարձատրվող ֆիզիոլոգիական արձակուրդից եւ իրականության վերածեն իրենց բիզնես գաղափարը: Բացի այդ, նրանք ավտոմատ կերպով ներգրավվում են «Ստարտափ պերի» նախագծում եւ կարող են բացառիկ պայմաններով ու արտոնություններով օգտվել ոչ ֆինանսական եւ ֆինանսական սպասարկումներից:

Կրթություն ստանալու պահանջարկի աճին զուգընթաց, ավելացավ նաեւ տարբեր դասընթացների եւ դասերի թիվը: Արդեն շատ են ծրագրերի, մարկեթինգի, չինարեն ուսուցման, թե այլ դասընթացների հարցով ընտրությունը, ինչը մի քանի տարի առաջ բացառություն էր կազմում: Թեպետ գոյություն չունի միասնական համակարգ, որտեղ շահագրգռված անձը կարող էր ծանոթանալ բոլոր առաջարկություններին, իսկ դասընթացի հեղինակներն իրենց են ներկայացնում շահագրգռված անձանց: «Իդեա կուրսը» հենց այն ընդհանուր հարթակն է, որը մատչելի կլինի սպառողների համար իրենց հետաքրքրող դասընթացի որոնման, կողմնորոշման, գնի համեմատության եւ ընտրության համար, իսկ դասընթացի հեղինակների համար այն նոր հնարավորություն է բացում գրավել ավելի մեծ լսարան եւ խուսափել տեխնիկական բոլոր մանրամասներից, որոնք անհրաժեշտ են դասընթացի հետաքրքրության աճի համար,- հայտարարեց «Ստարտափ դեկրետ» նախագծի հաղթող Մարիամ Աբուլաձեն:

«Ստարտափ դեկրետը», որը TBC բանկն սկսել էր երկու տարի առաջ, նորարարական նախագիծ է, որը նմանակը չունի երկրում: Նախագիծը բացառիկ եւ ոչ ստանդարտ մոտեցում է, ինչպես աշխատակիցների, այնպես էլ՝ «Ստարտափ պերի» ծրագրի աջակիցների համար:

Այս տարի նախագծին մասնակցեց 14 TBC-ական, նրանք իրենց բիզնես գաղափարները ներկայացրին հատուկ ընտրված ժյուրիի անդամներին, որի արդյունքում ժյուրին կարողացավ ընտրել լավագույն գաղափարի հեղինակներին: Նախագծին մասնակցելու համար ներկայացված բիզնես-գաղափարները պետք է լինեին տեխնոլոգիական նորարական:

«Ստարտափ դեկրետի» մի քանի հաղթողներ արդեն օգտվում են իրենց հասանելիք ֆիզիոլոգիական արձակուրդից եւ ժամանակը ծախսում են իրենց բիզնես-գաղափարների զարգացման ու դրա իրականացման համար: Նախագիծը շարունակվում է: Հաջորդ հաղթողներին TBC-ին կներկայացնի ընթացիկ տարվա սեպտեմբերին:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԵՑ ՕՆԼԱՅՆ ԱՊԱՌԻԿ ԹՎԱՅԻՆ ԱԼԻՔ

Սպառողների կյանքը դյուրացնելու նպատակով, TBCganvadeba.ge-ով ապառիկ սպասարկումով օգտվելն արդեն հնարավոր է նաեւ առանց տանից դուրս գալու եւ կարճ ժամանակահատվածում:

Դրա համար սպառողը կայք-էջում տեղակայված գործընկեր օբյեկտների ցուցակում ընտրելու է մեկ կամ մի քանի ցանկալի իրեր եւ լրացնի պարզ դիմում: Ծրագիրը ավտոմատ քննարկում է դիմումը, որից հետո սպառողը մի քանի վայրկյանում ընդունում է դիմումի հաստատման ծանուցումը եւ վերանում է նրա կողմից մասնաճյուղ կամ խանութ գնալու ու օպերատորի մոտ դիմում լրացնելու, զրուցելու անհրաժեշտությունը:

- TBC բանկի առաքելությունն է դյուրացնել մարդկանց կյանքը: Մեր թիմը մշտապես աշխատում է սպառողներին այնպիսի արտադրանք եւ սպասարկումներ մատուցելու ուղղությամբ, որոնք առավելագույնս հարմարեցված են նրանց կարիքներին: Գործընթացները ֆիզիկականից օնլայն տարածք տեղափոխելը եւ դրա թվայնացումը այդ ռազմավարության բաղադրիչն են: Ուրախ ենք, որ Վրաստանում առաջինն էինք, ովքեր ապառիկ սպասարկումներից սպառողներին ընձեռեցինք օգտվելու հնարավորություն, եւ դրա համար նրանք ստիպված չեն լինի այցելել մասնաճյուղ, առավել եւս ներկայիս մարտահրավերների պայմաններում,- հայտարարեց TBC բանկի ապառիկ սպասարկումների զարգացման լիգայի ղեկավար Իրակլի Եվգենիձեն:

Ցանկալի իրը գնելու համար, TBCganvadeba.ge-ով հաստատված օնլայն ապառիկ սպասարկումից սպառողը կարող է օգտվել մեկ ամսվա ընթացքում:

Կայք-էջում մշտապես կթարմացվեն նոր գործառույթներ, կթարմացվի նաեւ գործընկեր օբյեկտների ցանկը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Հոկտեմբերի 9-ին Երեւանում, Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, անցկացվեց Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցեցին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կոլեգիայի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը եւ ԵԱՏՄ անդամ երկրների կառավարությունների ղեկավարները՝ Ռուսաստանի կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինը, Բելառուսի վարչապետ Ռոման Գոլովչենկոն, Ղազախստանի վարչապետ Ասկար Մամինը: Ղրղզստանի կողմից նիստին մասնակցել է Հայաստանում Ղրղզստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալիկբեկ Ջեկշենկուլովը:

Դիմավորման եւ արարողակարգային տեսալուսանկարահանմանը հաջորդեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի նեղ կազմով հանդիպումը, որտեղ խոսքով ելույթ ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում քննարկվել են սանիտարա-համավարակային իրավիճակի եւ Միությունում ուղեւորափոխադրումների վերսկսման հարցեր, ուղեւորային հաղորդակցության անվտանգ վերականգնման ուղղությամբ անելիքները, ինչպես նաեւ եվրասիական ինտեգրացիայի զարգացման ռազմավարությունը, այլ հարցեր:

Որոշվեց ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի հաջորդ նիստն անցկացնել դեկտեմբերի 4-ին, Մոսկվայում:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ ԵՂԵԼ Է ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆՊԱՏԱԿԸ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 27-ին արցախա-ադրբեջանական շփման գծի երկայնքով սկսվեցին ակտիվ մարտական գործողություններ: Նույն օրը Հայաստանում եւ Արցախի Հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն եւ համընդհանուր զորահավաք:

Հոկտեմբերի 8-ին, «Euronews»-ին տված հարցազրույցում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց, որ Հայաստանն ու Արցախը պատերազմ սկսելու պատճառ չունեն, քանի որ ռազմական խնդիր չունեն լուծելու, հավելելով, որ ակնհայտ է՝ ընթացող պատերազմը սկսել է Ադրբեջանը:

- Միջազգային հանրությունը եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը պետք է արձանագրեն, թե ինչ է տեղի ունեցել եւ ինչ է տեղի ունենում: Մենք ողջունել ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահների ու ԱԳ նախարարների հայտարարությունը, եւ այդ Թուրքիան է հայտարարել, որը կարծում է, թե Ադրբեջանը չպետք է դադարեցնի ռազմական գործողությունները, եւ, ըստ էության, այն մնացել է Թուրքիայի տված հանձնարարականի շրջանակներում: Սա ցեղասպանության սպառնալիք է: Այդ ցեղասպանության իրականացման գործում այսօր ներգրավված են միջազգային ահաբեկիչներ, որոնք հավաքագրվել եւ տարածաշրջան են բերվել Թուրքիայից ու կռվում են Ադրբեջանի կողմից: Այս փաստն արդեն ճանաչել են մի շարք երկրներ,- նշեց վարչապետը:

- Հայաստանի եւ Արցախի համար խաղաղությունը միշտ եղել է գլխավոր եւ գերագույն նպատակը: Բռնության միջոցով որեւէ լուծման հասնել հնարավոր չէ: Մարդիկ չեն կարող իրենց հազարամյա հայրենիքը թողնել Ադրբեջանի պահանջով: Նրանք պետք է ինքնապաշտպանվեն,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԷՍԿԱԼԱՑԻԱՆ

Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան եւ Ամերիկայի Միացյալ Նահանգները ամենավճռական ձեւով դատապարտում են բռնության էսկալացիան Լեռնային Ղարաբաղի հակամարտության տարածքում եւ նրա սահմաններից դուրս:

Այս մասին ասված է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի, Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Լը Դրիանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Մայք Պոմպեոյի համատեղ հայտարարության մեջ:

Նախարարները միահնչակ ընդգծել են, որ վերջին հարձակումները, որոնց նպատակը, ենթադրաբար, քաղաքացիական օբյեկտներն էին՝ ինչպես շփման գծի երկայնքով, այնպես էլ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքներում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտուց դուրս, ինչպես նաեւ նման հարձակումների անհամաչափությունն անընդունելի սպառնալիք են տարածաշրջանում կայունության համար:

Վկայակոչելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երեք երկրների ղեկավարների հոկտեմբերի 1-ի հայտարարությունը՝ նախարարները կրկին կոչ են արել հակամարտության կողմերին անհապաղ եւ անվերապահ հաստատել հրադադարի ռեժիմ:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 9-ին Մոսկվայում հումանիտար հրադադարի հաստատման վերաբերյալ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կոչով, կայացավ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպումը:

Հանդիպման օրակարգում բացառապես ռազմական գործողությունների դադարեցման, հումանիտար նպատակներով դիակների եւ գերիների փոխանակման հարցերն են:

Լրատվամիջոցներին թույլատրվել է միայն հանդիպման մեկնարկի արարողակարգային նկարահանում, ապա քննարկումները շարունակվել են փակ դռների հետեւում:

ՓԱՍՏԵՐ՝ 12-ՕՐՅԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Արցախի հետ շփման գծի ողջ երկայնքով սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան Ադրբեջանն ակտիվ ռազմական գործողություններ է սկսել: Հրետակոծվում եւ հրթիռակոծվում են նաեւ խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը եւ Շուշին: Ադրբեջանի զինուժը թիրախավորել է նաեւ Հայաստանի զինվորական եւ քաղաքացիական ենթակառուցվածքները: Արցախում եւ Հայաստանում Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի, ողջ զինանոցի կիրառման՝ հրետակոծման, ԱԹՍ հարվածների եւ հրթիռակոծման հետեւանքով 21 քաղաքացիական անձ է զոհվել, վիրավորվել 80-ից ավելին: Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում հայկական կողմից զոհվել է 350 զինծառայող եւ կամավորական:

Վերջին տվյալներով, հայկական կողմը ոչնչացրել է հակառակորդի 4 069 զինծառայողի եւ ահաբեկչի: Թշնամու կորուստներն են՝ 145 ԱԹՍ, 16 ուղղաթիռ, 17 ինքնաթիռ, 496 միավոր զրահատեխնիկա եւ 4 ՏՈՍ:

Առկա են հաստատված տեղեկություններ, որ Ադրբեջանի զինուժի կազմում հայկական կողմի դեմ մարտերի մեջ են նաեւ Սիրիայից Թուրքիայի միջոցով բերված վարձկաններ: Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հաստատել է, որ տիրապետում է լուրջ փաստերի այդ մասին. ջիհադիստները կապեր ունեն «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման հետ: Վարձկանների ներգրավվածության մասին փաստերի է տիրապետում նաեւ Ռուսաստանը: Այդ մասին հայտարարել է նաեւ ԱՄՆ պաշտպանության նախարարությունից աղբյուրը: Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը նշել է, որ Դամասկոսը նույնպես կարող է հաստատել՝ Թուրքիան Սիրիայից Ղարաբաղ է ուղարկել ջիհադիստների:

ՀՐԹԻՌԱԿՈԾՎԵԼ Է ԵՈՒԵԻԻ ՂԱԶԱՆՉԵՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայկական միասնական տեղեկատվական հարթակը հայտնում է, որ հակառակորդը հարվածել է Շուշիի խորհրդանիշ համարվող Ղազանչեցոց եկեղեցուն:

Ըստ հայկական լրատվամիջոցների, Շուշիի տաճարը վերակառուցվել էր 1990-ականների մարտերից հետո:

ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Հայաստանի ազգային անվտանգության ծառայության ղեկավարը հեռացվել է պաշտոնից:

Ըստ հայկական լրատվամիջոցների, Արգիշտի Քյարամյանի պաշտոնանկ անելու հրամանը ստորագրել է Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը:

Հայկական լրատվամիջոցները գրում են, որ երկրի ազգային անվտանգության ծառայության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Միքայել Համբարձումյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱԿԱՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հայաստանի առողջապահության նախարարությունը կոչ է անում անտարբերության չմատնել COVID-19-ով պայմանավորված համաճարակային իրավիճակը, լինել զգոն, խստիվ պահպանել հակահամաճարակային կանոնները:

Հայաստանի առողջապահության նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ վերջին օրերին համայն հայության ողջ ուշադրությունը սեւեռված է Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակին: Կենաց-մահու կռիվ է, եւ այս համատեքստում մյուս խնդիրները մղվում են հետին պլան: Սակայն պետք է ողջամիտ լինել եւ չթուլանալ:

Այս օրհասական պահին խիստ կարեւոր է չկորցնել զգոնությունը, անտարբերության չմատնել աշխարհում, եւ այդ թվում՝ նաեւ Հայաստանում COVID-19-ով պայմանավորված համավարակային իրավիճակը: Օրեցօր ավելացող հիվանդացության դեպքերը փաստում են, որ այն ոչ մի կերպ չի նահանջել, ավելին՝ Հայաստանի ողջ տարածքում վերջին օրերին դիտվում է կորոնավիրուսային հիվանդության նկատելի աճ՝ պատերազմի պայմաններում ավելացնելով առողջապահական համակարգի ծանրաբեռնվածությունը եւ, ցավոք, խլում է կյանքեր:

«Սիրելի՛ ժողովուրդ, անգամ այս լարվածության մեջ անհրաժեշտ է խստիվ պահպանել հակահամաճարակային կանոնները: Կրկին ու կրկին կոչ ենք անում լինել ավելի զգոն, շարունակել կրել դիմակ, պահպանել սոցիալական հեռավորությունն ու ձեռքերի հիգիենան: Հարկ է հիշեցնել, որ ինչպես համաճարակի ողջ ընթացքում, այնպես էլ՝ հիմա, առավել քան կարեւոր է մեր քաղաքացիների առողջությունն ու մարտունակությունը:

Եվս մեկ անգամ հորդորում ենք՝ ցանկացած իրավիճակում լինել հետեւողական, պահպանել հակահամավարակային կանոններն՝ այն գիտակցմամբ, որ կարող ենք կանխել հիվանդության տարածումը, ինչն առողջ եւ ամուր կպահի մեր թիկունքը»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

12.10.2020 Աղվանքի Սուրբ Գրիգորիս կաթողիկոսի նշխարների գտնվելու, Թաթուլ եւ Վարոս, Թումաս, Անտոն, Կրոնիդես սուրբ հայրերի ու յոթ խոտաճարակների օր

15.10.2020 Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացու, Տիմոթեոս եւ Տիտոս առաքյալների հիշատակության օր

17.10.2020 Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես Ավետարանիչների հիշատակի տոն

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղի հանրային դպրոցի աշխատակազմը ի սրտե շնորհավորում է դպրոցի տնօրեն Հրանուշ Խուբլարյանին ծննդյան օրվա առիթով:

Հարգարժան Հրանուշ, մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, հաջողություններ, անսպառ եռանդ ու պսակվող հաջողություններ գործնական եւ անձնական կյանքում:

«Վրաստան» թերթի խմբագրությունը եւս միանում է շնորհավորանքին եւ տիկին Հրանուշին մաղթում երջանկություն, ձեռքբերումների առատություն՝ տնօրենի շնորհակալ գործում:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ՓԼԵՅ-ՕՖՖԻ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Վրաստանի հավաքականը, Եվրոպայի առաջնության որակավորման փուլի փլեյ-օֆֆի կիսաեզրափակչում, հանդիպում ունեցավ Բելառուսի հավաքականի հետ եւ հաղթեց 1:0 հաշվով:

Այդ հաղթանակը Վրաստանի ազգային ընտրանուն հնարավորություն ընձեռեց նոյեմբերի 12-ին Թբիլիսիում, Եվրոպայի առաջնության որակավորման փուլի փլեյ-օֆֆի եզրափակչի շրջանակներում, իր ուժերը չափել Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականի հետ: Այդ մրցամարտի հաղթողը կնվաճի Եվրոպայի առաջնության մասնակցի ուղեգիր:

Նշենք, որ ՈՒԵՖԱ-ի որոշմամբ, 2020-2021 թվականների սեզոնի ազգերի լիգայի հանդիպումը Հայաստանի եւ Վրաստանի հավաքականների միջեւ կանցկացվի չեզոք մարզադաշտում, Լեհաստանում, հոկտեմբերի 11-ին:

ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Երկրային կյանքին հրաժեշտ տվեց եւս մի երեւելի անհատականություն՝ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի նախկին գլխավոր ռեժիսոր, Վրաստանի արվեստի վաստակավոր գործիչ Միքայել Կարապետի Գրիգորյանը, ում կյանքի իմաստն ու բովանդակությունը թատրոնն էր...

Անչափ հետաքրքիր է նրա անցած ստեղծագործական ուղին՝ դերասանից մինչեւ գլխավոր ռեժիսոր: Նա իր ստեղծագործական կյանքի ընթացքում խաղացել է երկու տասնյակից ավելի դերեր եւ բեմադրել հարյուրից ավելի թատերական ստեղծագործություններ:

Միքայել Գրիգորյանն իր արվեստով, արտիստի, ռեժիսորի, մտավորականի եւ քաղաքացու իր տեսակով լավագույնս արտահայտեց ու նույնիսկ խորհրդանշեց իր ժամանակը: Այո՛, Միքայել Գրիգորյանի բեմադրած պիեսներն իրենց ուրույն տեղն են գրավել մեր թատրոնի հարուստ ու բազմաբովանդակ պատմության մեջ, որոնցից են՝ «Չար ոգի», «Արշակ Երկրորդ», «Պեպո», «Խաթաբալա», «Արա Գեղեցիկ», «Կուկարաչա», «Լուարսաբ եւ Դարեջան», «Լուսնի խավարման գիշերը», «Ծառերը կանգնած են մահանում», «Պատուհանից այն կողմ գարուն է», «Սողոմոն Թեհլերյան» եւ այլն:

Միքայել Գրիգորյանի ծառայությունները թատրոնին աննկատ չեն մնացել: Նա պարգեւատրվել է մեդալներով ու պատվոգրերով, արժանացել է Վրաստանի «Պատվո շքանշանի» եւ Հայաստանի մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալի:

Այո՛, զարմանահրաշ երեւույթ էր Միքայել Գրիգորյանը: Նրա հետ իմ հանդիպումների ու շփումների ժամանակ հաճախ էինք զրուցում կյանքի, արվեստի (ոչ միայն թատերական) բազմապիսի խնդիրների շուրջ: Ինձ միշտ հիացմունք են պատճառել նրա խոր, իմաստուն եզրահանգումները կյանքի, մասնավորապես՝ թատերական արվեստի խնդիրների շուրջ: Հիանալի գիտեր համաշխարհային թատերարվեստի պատմությունը՝ արժեքները գնահատելիս դրսեւորում էր հիմնավոր իմաստնություն:

Այս բոլորն արդյունք էր նրա մարդկային էության: Չէր տեղավորվում իր պատկերացմամբ սարքված, անհեթեթ կանոնների, սահմանափակումների մեջ:

Շատերին էր թվում, որ Միքայել Գրիգորյանը խուսափում է մարդկանցից: Սակայն, նա մարդկանց սիրում էր բոլորից շատ: Թվացյալ մեկուսացումն ինքնապաշտպանության ձեւ էր պարզապես, չհասկացվելու, հուսախաբություն չապրելու երկյուղ: Ներքին, բնածին մի ազնվականություն կար նրա մեջ, որ գալիս էր ծնողներից, ընտանեկան այն պարզ միջավայրից, որտեղ նա մեծացել էր:

Ինչպե՞ս հաշտվել այս կորստի հետ եւ այն մեծ ամայության, որ իրենից հետո միշտ թողնում են լուսավո՛ր, պայծառ մարդիկ:

Այնքա՜ն ասելիք կա նրա մասին, սակայն չկա ինքը՝ տաղանդավոր մարդը, տաղանդավոր ռեժիսորը: Բայց իր կյանքի, մեր համատեղ անցկացրած կյանքի վկայված պատմությունը դեռ երկար քայլելու է իր հետքերով, նրա քայլերի արձագանքն ուղեկցելու է մեզ՝ մեր ամբողջ կյանքում, նա ապրելու եւ ապրեցնելու է ու երբեք չի բացակայելու թե՛ մենության պահերին, թե՛ ընկերական բուռն հավաքներին:

Նրա ծիծաղը հնչելու է միշտ, այդպես ենք մենք նրան հիշելու, իսկ նա մեծ բանաստեղծի նման ամեն ակնթարթ կեսկատակ-կեսլուրջ հիշեցնելու է մեզ՝ «Ինձ բացակա չդնեք»:

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի փոխտնօրեն

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Դրիմում ծնված հայազգի աշխարհահռչակ ծովանկարիչ: 6.Մթերքը պահելու գետնահարկ շինություն: 9.Հնչյունի նշանը: 11.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 11.Հնագույն զենք: 12.Հովհ.Թումանյանի ստեղծագործություններից: 14.Աշակերտ, սովորող: 15.Ե.Չարենց՝ «...ն ու Ալին»: 16.Գետ Վրաստանում: 17.Նկարչի ստեղծածը: 19.Ամերիկացի գրող: 20.Գյուղ Վրաստանի Կախեթիի տարածաշրջանում: 21.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 22.Անիվ: 25.«... ժայռերդ արծվի բույն» (Ավ.Իսահակյան): 28.Քարի տեսակ: 30.Աստվածաշնչյան գետ: 32.Հայկական ամսանուն: 33.Ներքին օրգան: 34.Ցուցական դերանուն: 35.Թունավոր օձ: 37.Նար-Դոսի ստեղծագործություններից՝ «... Սարոյան»: 38.Անշունչ առարկա: 40.Հայ կին դիվանագետ, Ճապոնիայի դեսպանը՝ ... Աբգար: 42.Մեքենայի մաս: 45.Կինոյի հատված: 46.Անկաշկանդ, ոչ կասկածելի: 48.Հանգիստ, խաղաղ: 49.... արտահայտող, բովանդակություն ունեցող: 51.Չոր եղանակ, ոչ տեղումնառատ: 54.Ռաֆֆու վեպի հերոսուհի: 56.Ե'վ գյուղ, ե'ւ գինի: 60.Գյուղ Վրաստանում, Փարվանա լճի ափին: 61.Շոթա Ռուսթավելու գրական հերոսուհի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Քաղաք Իրաքում: 2.Ե'վ Չալդրանյանը, ե'ւ Ստեփանյանը: 3.Ամերիկահայ գրող Լեւոն-... Սյուրմելյան: 4.Քաղաք ՌԴ-ում: 5.Գրական-հասարակական կազմակերպություն Թբիլիսիում: 6.Քաղաք Ճապոնիայում: 7.Կոմիտասի երգերից: 8.Կղզի, որտեղ Մխիթարյան միաբանությունն է: 12.Պատմաբան, գրականագետ Առաքել Բաբախանյանի կեղծանունը: 13.Ջավախքում ծնված սպորտային մեկնաբան: 18.Ջրառատ գետ Ամերիկայում: 19.Գ.Սունդուկյանի հանրահայտ դրամատիկական գործերից: 23.Գեղեցիկ, կլորիկ թռչուն: 24.Քաղաք Հայաստանում: 26.Հարցական դերանուն: 27.Հանս Անդերսենի հեքիաթի հերոսուհի: 29.Ակսել Բակունցի ժողովածուներից: 31.Նավերին ուղղորդող լուսակիր: 36.Ջ.Վերդիի օպերաներից: 37.Հայերենի նախածանց: 39.Հայոց Պարթեւ կաթողիկոս: 41.«Եկան, զարկեցին մեր քարավանն ազնիվ //Հայոց լեռներում, //... լեռներում» (Հովհ.Թումանյան): 43.Համի տեսակ: 44.Խոնավ, չչորացած: 46.Լեռ, որտեղ թաքնվել են Հռիփսիմյան կույսերը: 47.Ոչ սիրելի: 50.Բերդ-ամրոց Վրաստանում, Ախալցիխեում: 52.Քաղաք Շվեյցարիայում: 53.... Երկիր կղզի: 55.Խմբի հաղթական ընթացքը: 56.Գետի, լճի ...: 57.Արի, մոտեցիր: 58.Անձնական դերանուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 2.Երախ: 4.Գագաթ: 7.Պտուղ: 8.Ուզին: 9.Տյուն: 10.Ասպատակ: 14.Գզիրն: 16.Կալ: 18.Հովատակ: 22.Ոնց: 24.Բիրեմա: 25.Թեա: 26.Իցա: 28.Թագուհի: 31.Յոգուրտ: 34.Կորալ: 35.Անմիտ: 36.Ունիտա: 38.Կանեփ: 41.Կարգ: 44.Լետա: 45.Տեգր: 46.Կեկել: 48.Կաթ: 50.Աքաղաղ: 51.Տոլեդո: 52.Պաշար: 53.Լից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Սպիտակ: 2.Եղունգ: 3.Խոնարհ: 4.Գրիպ: 5.Գրատ: 6.Թզուկ: 11.Սնոբ: 12.Ալար: 13.Արամ: 15.Ջանի: 17.Աբեղյան: 19.Վիպակ: 20.Տելուր: 21.Կաթիլ: 23.Ցցորմ: 27.Ագատ: 29.Գոռալ: 30.Հավետ: 32.Ունակ: 33.Տիար: 36.Ուստյան: 37.Ինգմար: 39.Ներկել: 40.Փաթթոց: 42.Աբեղա: 43.Գրետա: 46.Կապ: 47.Լոր: 49.Ադի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՈ ՄՈՆԱՑԱՐՈՍ: ՈՅԲՈԼՈՆՈ 0105, Ց.ԱՅՈՎՆԵՂԼՈՆ ՀՅՈՒՐԱ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ» ՈՅԲՈԼՈՆՈ, ՍԱՀԱՐՈՅԵՂՈՎ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445